ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄՇԴ - 15 - 2025
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան « 03 » « 02 » 2025թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղար Հասմիկ Հակոբյանի, որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հայաստանի ազգային գրադարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն), ի դեմս կազմակերպության տնօրեն Աննա Զուլյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 27-ի «ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2060-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում)՝ որոշման «1124. Գրահրատարակչության և գրադարանների ծրագիր» ծրագրի «11004. Գրադարանային ծառայություններ» միջոցառման (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել սույն պայմանագրով սահմանված վճարը, իսկ կազմակերպությունը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված վճարի դիմաց սույն պայմանագրով սահմանված կարգով ու ժամկետում կատարել սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները և իր կանոնադրությամբ նախատեսված գործառույթները, այդ թվում գրադարանային ծառայություններ և այլ գործառույթներ (այսուհետ՝ միջոցառումներ)՝ ըստ սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող.

1.1.1. կանխատեսվող ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների՝ Հավելված N 1-ի,

1.1.2. ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցի՝ Հավելված N 2-ի:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության և պետական այլ մարմինների միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ներքին աուդիտ,

2.1.2. կազմակերպությունից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկատվություն սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին,

2.1.3. սույն պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.4-րդ կետով նախատեսված տուգանքը, իսկ սույն պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում՝ սույն պայմանագրի 6.5-րդ կետով նախատեսված տույժերը,

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. առանց հիմնավոր պատճառի կազմակերպությունը ժամանակին չի սկսում միջացառման իրականացումը, կամ միջոցառման իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (սույն պայմանագրով կամ կանոնադրությամբ միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5. կազմակերպության կողմից սույն պայմանագրի պահանջները չկատարելու դեպքում դադարեցնելու ֆինանսավորումը՝ մինչև թերությունների վերացումը,

2.1.6. կազմակերպության կողմից սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների ֆինանսական ծախսեր ենթադրող ոչ ֆինանսական ցուցանիշների թերակատարման դեպքում պահանջելու հետ վերադարձնել համապատասխան չափով հաշվարկած գումարը, կամ նշված գումարի չափով պակասեցնելու հետագա տարիների ֆինանսավորումը, կամ հետագա տարիների պայմանագրերով պարտավորեցնել լրացնելու ոչ ֆինանսական ցուցանիշների թերակատարումը,

2.1.7. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները,

2.1.8. սույն պայմանագրի 2.4-րդ կետով նախատեսված պարտավորությունները վերանայել (փոփոխություն կատարել) նախորդ տարվա հաշվետվությունների արդյունքների հիման վրա:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. պետական մարմնից պահանջելու ընդունել սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները,

2.2.2. պետական մարմնից պահանջելու վերացնել կազմակերպության գործողություններից (անգործությունից) անկախ՝ պետական մարմնի մեղքով սույն

պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները կամ վերանայել սույն պայմանագրի պայմանները,

2.2.3. իրականացված միջոցառման արդյունքները պետական մարմնի կողմից ընդունվելու և պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.4. վաղաժամկետ լուծել սույն պայմանագիրը՝ սույն պայմանագրով կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և (կամ) ծրագրով նախատեսված դեպքերում իր և կազմակերպության կանոնադրություններով սահմանված իրավասությունների շրջանակներում աջակցել կազմակերպությանը, այդ թվում՝ կազմակերպությանը ցուցաբերել մեթոդական և կազմակերպական օգնություն,

2.3.2. ընդունել սույն պայմանագրի պահանջներին համապատասխան կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները և հաշվետվությունները,

2.3.3. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.3.4. իրականացված միջոցառումների մասին ներկայացված հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Հաշվետվություններում թերություններ հայտնաբերվելու դեպքում դրանք վերադարձվում են լրամշակման՝ դրա համար սահմանելով խելամիտ ժամկետներ: Եթե իրականացված միջոցառումների ներկայացված հաշվետվությունները համապատասխանում են ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են,

2.3.5. իրականացնել սույն պայմանագրով նախատեսված այլ աշխատանքներ:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. ապահովել կազմակերպության գործունեությունը կազմակերպության կանոնադրական նպատակներին և խնդիրներին համապատասխան,

2.4.2. ժամանակին, պատշաճ ձևով ու կարգով կատարել սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված միջոցառումները՝ ՀՀ օրենսդրության և իրավական այլ ակտերի համաձայն,

2.4.3. ապահովել գրադարանի կայուն գործունեությունը, ֆոնդարաններում գրադարանային փաստաթղթերի անվտանգ պահպանությունը, ազգանշանային և հակահրդեհային համակարգի շահագործումը:

Աշխատանք գրացուցակների հետ.

2.4.4. ապահովել այբբենական, կարգային և վերնագրային գրացուցակների համապատասխանեցումը գրադարանային հավաքածուներին:

Գրադարանային հավաքածուի համալրում և պահպանում.

2.4.5. ապահովել գրադարանային հավաքածուների համալրումը, հաշվառումը, պահպանությունը, վերականգնումը,

2.4.6. ապահովել ՀՀ-ում թղթային և այլ նյութական կրիչներով ամեն տեսակի հրատարակությունների, մատենագիտական ու վիճակագրական պետական գրանցումն ու հաշվառումը: Ներկայացնել հաշվետվություն համալրման վերաբերյալ՝ նշելով աղբյուրները,

2.4.7. ապահովել գրադարանային հավաքածուի համալրման աշխատանքները օտարերկրյա պետություններում հրատարակված հայագիտական բնույթի գրքերով,

2.4.8. ձեռք բերել համապատասխան գրքեր՝ (բրայլյան, աուդիո) տեսողության խնդիրներ ունեցող օգտվողների համար և կազմակերպել դրանց սպասարկումը,

2.4.9. իրականացնել գրքափոխանակություն ՀՀ և օտարերկրյա պետությունների գրադարանների, կազմակերպությունների ու անհատների հետ,

2.4.10. իրականացնել հնատիպ գրքերի հավաքածուից 6 միավոր գրքի՝ Ցանկ N 1 և մշակութային նշանակության հավաքածուից 85 միավոր գրքի կազմի և էջերի վերականգնումը՝ Ցանկ N 2, ինչպես նաև գրքերի և պարբերական մամուլի ոչ պակաս, քան 21750 թերթի ախտահանումն ու մանրէազերծումը և ոչ պակաս, քան 23450 թերթ միավորի վերականգնումը,

2.4.11. ապահովել գրադարանի այլալեզու հավաքածուի անվանական և քանակական վերահաշվառման աշխատանքները,

2.4.12. ապահովել հավաքածուների լիարժեք պահպանությունը, գրապահոցում ջերմախոնավային, սանիտարահիգիենիկ և լուսավորության նորմատիվային պահպանման հատուկ ռեժիմը և հակահրդեհային անվտանգության նորմերը:

Տեղեկատվության էլեկտրոնային սպասարկում.

2.4.13. ապահովել օտարերկրյա պետություններում հրապարակվող էլեկտրոնային հրապարակումների բաժանորդագրումը, միջգրադարանային բաժնույթի աշխատանքները, ինչպես նաև գրադարանային-տեղեկատվական ապասարկումը, այդ թվում էլեկտրոնային տեղեկույթի (ինտերնետ, տեսալսողական նյութեր, էլեկտրոնային հրապարակումներ) մատչելիությունը,

2.4.14. համակարգել հայաստանյան գրադարանների համահավաք էլեկտրոնային գրացուցակին մասնակից կազմակերպությունների կողմից հավաքածուների մուտքագրման գործընթացը՝ ապահովելով էլեկտրոնային շտեմարանին մատչելիությունը և հասանելիությունը,

2.4.15. շարունակել համալրումները «Հայ գիրք» և «Հայ մամուլ» շտեմարաններում,

2.4.16. շարունակել հայերեն հատվածներ պարունակող այլալեզու գրքերի շտեմարանի ձևավորումը և համալրումը:

Գրադարանային փաստաթղթի թվանշանացումը.

2.4.17. համակարգել գրադարանային հավաքածուի թվայնացման աշխատանքները գործընկեր գրադարանների համագործակցությամբ (տեսաձրված նյութերի տեխնիկական մշակում),

2.4.18. կազմակերպել համահավաք գրացուցակի գրառումների խմբագրման աշխատանքները,

2.4.19. շարունակել թվայնացման ծրագրի իրականացումը՝ «Հայ հնատիպ գրքի», նվազագույն տպաքանակ ունեցող հայագիտական գրադարանային փաստաթղթերի թվայնացված տարբերակների համալրման աշխատանքները, ինչպես նաև արտերկրի

գրադարաններից ձեռք բերել Հայաստանի գրադարաններում բացակայող հայերեն հնատիպ գրքերի թվայնացված օրինակները,

2.4.20. ապահովել վտանգված հավաքածուների և մեկ օրինակ նյութերի թվայնացման գործընթացը:

Համագործակցություն.

2.4.21. գրադարանային գործի ոլորտում փոխգործակցության, կապերի ամրապնդման ու զարգացման նպատակով համագործակցել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Վաչե և Թամար Մանուկյան» Մատենադարանի, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության, «Մատենադարան» Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի, Պոլսի Պատրիարքության Օրմանյան Մատենադարանի, Մխիթարյան միաբանության գրադարանի /Վենետիկ և Վիեննա/, Բեյրութի Հայկազյան համալսարանի, Ռումինիայի, Իրանի Իսլամական Հանրապետության ազգային գրադարանի, Բեռլինի պետական գրադարանի, Չեխիայի, Ֆրանսիայի, Կոպենհագենի թագավորական, Ռուսաստանի և Բելառուսի ազգային գրադարանների, Հայաստանի պատմության թանգարանի, Ե. Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանի, Ե. Չարենցի տուն-թանգարանի, Մ. Սարյանի, Պ. Սևակի տուն-թանգարանների, Հովհ. Թումանյանի թանգարանի, Հայ և ռուս ժողովուրդների բարեկամության թանգարանի, Կոմիտաս թանգարան-ինստիտուտի, Հայաստանի ազգային պատկերասրահի, Երուսաղեմի Հայոց պատրիարքության Գյուլբենկյան գրադարանի, Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի «Ներսես Շնորհալի» գրադարանի, ՌԴ պետական գրադարանի, Կազանի համալսարանի գրադարանի, Մոսկվայի արվեստի պետական գրադարանի, Հայաստանի ազգային արխիվի, Սարդարապատի հուշահամալիրի թանգարանի, Ցեղասպանության թանգարան-ինստիտուտի, Կալիֆորնիայի համալսարանի Լոս Անջելեսի մասնաճյուղի, Ալեքսանդրիայի գրադարանի /Եգիպտոս/ հետ: Ավստրիայի ազգային գրադարանի, Լիբանանի «Ազդակ» օրաթերթի խմբագրակազմի, ՌԴ ազգային գրադարանի, ՌԴ Բ.Ելցինի անվ. Նախագահական գրադարանի, ՌԴ Ռուդոմինոյի անվ. արտասահմանյան գրականության, ԱՊՀ երկրների ազգային գրադարանների, Փարիզի Նուպարյան գրադարանի, Եգիպտոսի ՀԲԸՄ Կահիրեի մասնաճյուղի, Հայ կրթական հիմնարկության, Գալուստ Գյուլբենկյան հաստատության, Ռուսաստանի պետական գրադարան, Մոլդովայի Հանրապետության ազգային գրադարան, Ա. Օսմոնովի անվան Ղրղզստանի ազգային գրադարան, Տաջիկստանի ազգային գրադարան, Ալիշեր Նավոիի անվան Ուզբեկստանի ազգային գրադարան, Մ. Ռուդոմինոյի անվան արտասահմանյան գրականության համառուսաստանյան պետական գրադարան, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի պետական հանրային գիտատեխնիկական գրադարան, Ա. Ս. Գրիբոյեդովի «Խմելիտա» պետական պատմամշակութային և բնական արգելոց-թանգարան: Ապահովել Հայաստանի ազգային գրադարանի անդամակցությունը Եվրոպական ազգային գրադարանների հիմնադրամին («CENL»), «Գրադարանային միությունների և կազմակերպությունների միջազգային դաշնությանը» (IFLA), Եվրասիական գրադարանային միավորմանը (ԵԱԵ), Թվային ֆրանկոֆոն գրադարանների ցանցին:

Ստանդարտ համարանիշների տրամադրում.

2.4.22. ապահովել ՀՀ-ում գրքի միջազգային ստանդարտ համարակալման (ISBN), երաժշտական (նոտագրական) հրատարակությունների միջազգային ստանդարտ համարակալման (ISMN), պարբերականների միջազգային ստանդարտ համարակալման (ISSN) և DOI-ի ազգային գործակալությունների վարման աշխատանքները,

2.4.23. պատրաստել զեկույցներ ISBN, ISMN, ISSN միջազգային կենտրոններին՝ ազգային գործակալությունների կողմից կատարված աշխատանքների և համակարգերում ընդգրկված հրատարակչությունների տարեկան հաշվետվությունների մասին,

2.4.24. տեղեկացնել տեղական հրատարակչություններին համակարգերի գործունեության և նրանցում տեղի ունեցած փոփոխությունների և նորությունների մասին (բանավոր, անմիջական շփումներով, էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով, նամակներով և տպագիր նյութերի տարածմամբ),

2.4.25. կազմել տարվա ընթացքում միջազգային ստանդարտ համարանիշ ստացած գրքերի ցանկերը՝ ըստ ուղղությունների՝ գեղարվեստական, ոչ գեղարվեստական, գիտահանրամատչելի:

Մատենագիտական և գիտահետազոտական աշխատանքներ.

2.4.26. մատենագիտական բոլոր գրառումներն իրականացնել նյութի նկարագրության միջազգային ստանդարտի պահանջների համաձայն (International Standard Bibliographic Description)՝ մեքենաընթեռնելի մատենագիտական գրառումները՝ որպես տեքստային ֆայլ (առանձին կամ փաթեթով) արտածելու հնարավորությամբ,

2.4.27. ապահովել «Հայաստանի գրադարանները 2024թ.» վիճակագրական վերլուծության, «Հիշարժան տարեթվեր 2026» /ժամկետ՝ օգոստոսի 1/ օրացույցի, «Նոր գրքեր» տեղեկատվական ցանկի հրապարակում գրադարանի կայքէջում տեղադրում,

2.4.28. ընթացիկ մատենագիտության գծով կազմել և հրատարակել ազգային մատենագիտության «Հայ տպագրության տարեգրքերի» ամենամսյա ընթացիկ ցանկերը, իսկ հետադարձ մատենագիտության գծով՝ Հովհաննես Թումանյան. Հոբելյանական նյութերի մատենագիտություն,Նորահայտ անուններ. Օրացույցներ. Պրակ Բ., Հայ գրականությունը օտարալեզու թարգմանություններում. V դ. մինչև մեր օրերը. Մատենագիտություն, «Ֆրանսիա-Հայաստան. պատմական և մշակութային երկխոսություն» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու՝ ցանկերի մակետները և տպաքանակները նախապես համաձայնեցնել պետական մարմնի հետ,

2.4.29. վիճակագրության գծով կազմել և էլեկտրոնային հրապարակել «Հրատարակությունները Հայաստանի Հանրապետությունում 2024թ.» ցանկը էլեկտրոնային՝ CD տարբերակով, ինչպես նաև «Հայաստանի ազգային գրադարանի տարեգիրք. ՀԼՄ արձագանքները» տեղեկատուի, կազմումը և գրադարանի կայքէջում տեղադրումը, «Բանբեր Հայաստանի գրադարանների» հանդեսը,

2.4.30. շարունակել Գրատպության թանգարանի նոր ցուցանմուշների ձեռքբերումը և ցուցադրությունը:

Միջոցառումներ.

2.4.31. ապահովել ավանդական միջոցառումների (Գրադարանավարի օր, Ազգային գրադարանային շաբաթ, Գիրք նվիրելու օր և այլն), գրքերի շնորհանդեսների, հեղինակների, մշակույթի գործիչների հետ հանդիպումների, գրական ցերեկույթների,

երեկոների, ցուցահանդեսների և այլ միջոցառումների կազմակերպումը: Կազմակերպել միջոցառումներ՝ ըստ 2025 թ. հոբելյանների հաստատված ցանկի, գրքին, ընթերցանությանը և գրականությանը նվիրված ազգային և միջազգային օրերի,

Հոբելյաններ՝ Ավետիք Իսահակյան-150, Հրանտ Մաթևոսյան-90, Օֆելյա Համբարձումյան-100, Վահան Տերյան-140, Կոստան Զարյան-140, Ռուբեն Սևակ 140, Մորիս Ռավել 150, Նիկոլ Աղբալյան 150, Անտուան դը Սենտ-Էքզյուպերի-125, Կարպիս Սուրենյան-100, Ինտրա (Տիրան Զրաքեան)-150, Հենրիկ Մալյան-100, Աղասի Այվազյան-100, Ջեյն Օսթին-250 հոբելյանները, ինչպես նաև Ֆրանսիա-Հայաստան. պատմական և մշակութային երկխոսություն,

2.4.32. գրատպության թանգարանում «Թանգարանների գիշեր», «Թանգարանների միջազգային օր», «Եվրոպական ժառանգության օրեր» միջոցառումների խորագրերին համապատասխան մշակել նոր ծրագրեր, կազմակերպել միջոցառումներ, ցուցահանդեսներ,

2.4.33. ապահովել միջոցառումների հանրայնացումը մամուլի, սոցցանցերի, լրատվական տարբեր կայքերի միջոցով: Համագործակցել հրատարակչությունների և գրավաճառ ցանցի հետ՝ նոր գրքերի շնորհանդեսները համատեղ կազմակերպելու նպատակով,

2.4.34. կազմակերպել և իրականացնել միջոցառումներ՝ նվիրված ՀՀ պետական, ժողովրդական տոներին և հիշատակի օրերին,

2.4.35. գրադարանում նոր միջավայր ձևավորելու նպատակով ակտիվացնել համագործակցությունը մասնավոր կազմակերպությունների, գրողների, ստեղծագործական միությունների հետ, նպաստել նոր ծառայությունների ներդրմանը:

Կրթական ծրագրեր.

2.4.36. կազմակերպել տեսողության խնդիրներ ունեցողների համար 1 գործնական պարապմունք,

2.4.37. կազմակերպել և իրականացնել թվով 50 գրադարանավարների մասնագիտական վերապատրաստման և օգտվողների տեղեկատվական դասընթացներ /արտաբյուջեի միջոցներով/: Դասընթացներն՝ առցանց,

2.4.38. Աջակցություն մարզային գրադարաններ ծրագրի (Շարժական գրադարան) շրջանակում ապահովել հանրապետության բնակավայրերի բնակչության գրադարանային-տեղեկատվական սպասարկման ծառայությունների իրականացումը, Լոռու, Արարատի, Արագածոտնի, Արմավիրի և Տավուշի մարզերի համայնքային գրադարաններին, ինչպես նաև ապահովել զորամասերի և քրեակատարողական հիմնարկների գրադարաններին գրականության տրամադրումը,

2.4.39. ապահովել «Գրքերի ձեռքբերում» միջոցառմամբ գնված, պետական պատվերով և աջակցությամբ հրատարակված գրքերի բաշխումը՝ համաձայն համապատասխան միջգերատեսչական հանձնաժողովի որոշումների և նախարարի հրամանների,

2.4.40. գրադարանում ստեղծել մեդիակենտրոն՝ ապահովելով անհրաժեշտ նյութերով՝ ուսումնական ծրագրեր, մեթոդաբանական ուղեցույցներ, սարքավորումներ, թվային և աուդիո գրքեր, ֆիլմադարան:

Մեդիագրագիտության մակարդակի բարձրացման նպատակով իրականացնել գրադարանավարների վերապատրաստումներ ապա նաև նրանց կողմից սովորողների և գրադարանի այցելուների հետ կազմակերպել ծրագրեր ու դասընթացներ:

(Հիմք՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի «Հայաստանի Հանրապետության ապատեղեկատվության դեմ պայքարի 2024-2026 թվականների հայեցակարգը և դրանից բխող գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» N 1319 –Լ որոշում՝ կետ 3.2) գ 2 ենթագործ),

2.4.41. իրականացնել ծրագրերի հանրայնացման անհրաժեշտ գովազդատեղեկատվական արշավներ սոցիալական հարթակներում (տոմսերի վաճառքի հարթակները սոցիալական հարթակներ չեն համարվում): Միջոցառումների իրականացման մասին իրազեկման բոլոր հարթակների տեսանելի վայրում (ազդագրեր, հրավիրատոմսեր, պաստառներ՝ ներառյալ էլեկտրոնային տարբերակները) պարտադիր կերպով հրապարակել ՀՀ զինանշանը և պետական մարմնի անվանումը՝ պահպանելով «Հայաստանի Հանրապետության զինանշանի մասին» ՀՀ օրենքի պահանջները:

Գովազդատեղեկատվական բնույթի այլ հրապարակումներում (մամուլի հրապարակումներ, համերգային ծրագիր-բուկլետներ, տեսահոլովակներ, մամլո հաղորդագրություններ, ասուլիսներ, գրավոր և/կամ բանավոր այլ խոսք) կազմակերպությունը պարտավոր է ոչ միայն հրապարակել ՀՀ զինանշանն ու պետական մարմնի անունը, այլև նշել ԿԳՄՄՆ մասնակցության ձևաչափը (ԿԳՄՄՆ ֆինանսավորմամբ, ԿԳՄՄՆ աջակցությամբ), որը կարող է արտահայտվել ինչպես ուղղակի ֆինանսավորման, այնպես էլ թատերահամերգային դահլիճների տրամադրման և կազմակերպական այլ աջակցության տեսքով:

Համաֆինանսավորման դեպքում՝ պետական մարմնին տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ միջոցառումներին աջակցող կազմակերպության(ների), ֆինանսավորման չափի և վերջինիս(ներիս) հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին,

2.4.42. եռամսյակային հաշվետվություն ներկայացնել պետական մարմնին հրապարակային հարթակներում (կայքէջ, Facebook, Youtube, Instagram և այլն) կազմակերպության հետևորդների քանակի, ինչպես նաև յուրաքանչյուր միջոցառման գովազդային շահառուների (Like, Share) մասին,

2.4.43. սույն պայմանագրով սահմանված պարտավորություններն իրականացնել պետական մարմնի կողմից հաստատված մեթոդական ցուցումների, հրահանգների և այլ իրավական ակտերի (փաստաթղթերի) պահանջներին համապատասխան,

2.4.44. պետական մարմնին անհապաղ հայտնել սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին և միաժամանակ ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ այդ խոչընդոտներն վերացնելու համար,

2.4.45. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել միջոցառումների իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.46. իրականացնել միջոցառումների շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների հաշվապահական հաշվառման վարում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

2.4.47. պետական մարմնի պահանջով նրան հաղորդել տեղեկատվություն միջոցառումների կատարման ընթացքի մասին, ինչպես նաև ներկայացնել սույն պայմանագրի կատարմանը վերաբերող ֆինանսական և բովանդակային հաշվետվությունները (ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են կազմակերպության մոտ): Բովանդակային հաշվետվությամբ ներկայացվում է ամբողջական տեղեկատվություն միջոցառումների իրականացման, հրապարակման և ընթացքի, այդ թվում՝ արդյունքների գնահատման, մասնակիցների քանակի վերաբերյալ, կցելով համապատասխան նյութեր (լուսանկարներ, ազդագրեր, հրավիրատոմսեր, մամուլի հրապարակումներ և այլն, ներառյալ՝ իրազեկման բոլոր հարթակների տեսանելի վայրում պետական մարմնի վերաբերյալ այլ տեղեկատվական նյութեր)՝ էլեկտրոնային կրիչներով: Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում հաշվետվությամբ ներկայացված տվյալների իսկության համար,

2.4.48. պետական մարմնին ներկայացնել եռամսյակային ու տարեկան հաշվետվություններ՝ համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 2013 թվականի փետրվարի 4-ի N 104-Ն և 2019 թվականի մարտի 13-ի N 254-Ն հրամանների, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ և իրավական այլ ակտերով նախատեսված ձևով ու կարգով: Փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են կազմակերպությունում և վերջինս պատասխանատվություն է կրում հաշվետվությամբ ներկայացված տվյալների հավաստիության համար,

2.4.49. պետական մարմնի կողմից հաշվետվությունները չընդունվելու դեպքում անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.50. միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան, իսկ միջոցառումների համար կազմակերպության կողմից ընդգրկվող աշխատողների հետ աշխատանքային հարաբերությունները կարգավորել ՀՀ Աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով,

2.4.51. պետական մարմնի հետ նախապես համաձայնեցնել նրա իրավասությանը վերապահված հարցերի լուծման տարբերակները,

2.4.52. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.53. սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո օրենսդրությամբ սահմանված կարգով պետական մարմնի հաստատմանը ներկայացնել կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության նախահաշիվը՝ համապատասխան հիմնավորումներով: Նախահաշվի յուրաքանչյուր ծախսային ուղղության մեջ կատարվող փոփոխությունը նախապես՝ մինչև փաստացի ծախսերի կատարումը օրենսդրությամբ սահմանված կարգով համաձայնեցնել պետական մարմնի հետ: Նախահաշվում

փոփոխությունների ներկայացման առաջարկի վերջնաժամկետն է 2025 թվականի դեկտեմբերի 15-ը,

2.4.54. սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների տարեկան արդյունքները պետական մարմնի կողմից ընդունվելուց հետո կազմակերպությունը միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները (խնայողությունները) վերադարձնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2026 թվականի հունվարի 24-ը:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված միջոցառումների իրականացման համար պետական մարմինը կազմակերպությանն է վճարում **660194.1** հազար (վեց հարյուր վաթսուն միլիոն հարյուր իննսունչորս հազար հարյուր) դրամ՝ (ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները): Այդ գումարի չափը կարող է փոփոխվել սույն պայմանագրով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հիմքերով ու կարգով:

3.2. Սույն պայմանագրի 3.1-ին կետում նշված գումարը պետական մարմինը կազմակերպությանն է վճարում սույն պայմանագրի Հավելված N 2-ով սահմանված ժամկետներում, կազմակերպության՝ սույն պայմանագրում նշված գանձապետական հաշվեհամարին փոխանցումներ կատարելու եղանակով:

3.3. Կազմակերպության կողմից միջոցառումների կատարման՝ սույն պայմանագրով սահմանված ցուցանիշներն ու պայմանները խախտելու դեպքում պետական մարմինն իրավունք ունի վերանայել սույն պայմանագրի 3.1-ին կետում նշված գումարի չափը և դրա վճարման ժամանակացույցը:

3.4. Համաձայն «ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 23-րդ մասի՝ հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2025 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

4.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից, տարածվում է 2025 թվականի հունվարի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

5. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Սույն պայմանագրի 1-ին կետում նշված և կատարված միջոցառումների մասով կազմակերպությունը, ոչ ուշ, քան յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 10-ը, իսկ տարեկան կտրվածքով ոչ ուշ, քան 2026թ. հունվարի 20-ը պետական մարմնին է ներկայացնում ոչ ֆինանսական ցուցանիշների կատարման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն Հավելված N 3-ի: Տարեկան ցուցանիշների և հաշվետվության ամփոփման արդյունքում տրված դրական եզրակացության հիման վրա պետական մարմնի կողմից կազմվում է հանձնման-ընդունման արձանագրություն՝ համաձայն Հավելված N 4-ի:

5.2. Սույն պայմանագրի Հավելված N 1-ում ներառված ցուցանիշներում չեն կարող ներառվել պետական, համայնքային և այլ ֆինանսավորմամբ իրականացվող այլ ծրագրերի (մրցույթով և առանց մրցույթի դրամաշնորհի ձևով հատկացվող ֆինանսավորում և այլն) արդյունքները:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունները կողմերը պարտավոր են կատարել պատշաճ և սահմանված ժամկետներում: Դրանք ոչ պատշաճ կամ ժամկետանց կատարելու, չկատարելու կամ կատարելուց խուսափելու դեպքում, ինչպես նաև իրենց գործողություններով կամ անգործությամբ սույն պայմանագրի կատարման համար խոչընդոտներ ստեղծելու, մյուս կողմին վնաս պատճառելու կամ կանխատեսվող եկամուտներից զրկելու համար կողմերից յուրաքանչյուրը կրում է պատասխանատվություն մյուս կողմին պատճառած վնասների և բաց թողնված օգուտների լրիվ ծավալով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.2. Սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ՝ մյուս կողմի՝ սույն պայմանագրի պայմանները խախտելու դեպքում: Այդ ժամանակ նախաձեռնող կողմը պետք է ստանա վնասների և բաց թողնված (չստացված) եկամուտների լրիվ չափով փոխհատուցում:

6.3. Սույն պայմանագիրը վաղաժամկետ դադարեցնելը կամ լուծելը կողմերից որևէ մեկի համար այն կատարել շարունակելը աննպատակահարմար լինելու դեպքում կամ այլ պատճառաբանությամբ չի թույլատրվում: Նման դեպքում մյուս կողմն իրավունք ունի կամ ստանալ սույն պայմանագրի 6.1-ին կետով նախատեսված լրիվ փոխհատուցումը, կամ պահանջել սույն պայմանագրի հարկադիր կատարումը:

6.4. Սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպքում, ինչպես նաև սահմանված ժամկետները կազմակերպության կողմից չպահպանելու դեպքում վերջինս պետական մարմնին վճարում է տուգանք՝ ոչ պատշաճ կատարված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, իսկ սահմանված ժամկետները խախտելու դեպքում՝ ժամկետների խախտմամբ իրականացված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

6.5. Սույն պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում կազմակերպությունը պետական մարմնին վճարում է տույժ՝ սույն պայմանագրի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար: Ընդ որում, սույն կետով սահմանված տույժերը վերաբերում են պետական մարմնին ներկայացվող ինչպես ֆինանսական, այնպես էլ՝ բովանդակային հաշվետվություններից յուրաքանչյուրին:

6.6. Սույն պայմանագրով կազմակերպության կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կազմակերպությունը համարվում է սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը կայքում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

6.7. Սույն պայմանագրի կնքումից հետո 3-օրյա ժամկետում կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, կազմակերպության կողմից դրամաշնորհ ստանալու համար ներկայացված ծրագիրը հրապարակվում են պետական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքէջում:

6.8. Կազմակերպությունը սույն պայմանագրով նախատեսված ժամկետներում պետական մարմնին ներկայացնում է միջոցառումների կատարման վերաբերյալ հաշվետվություն, որը պետական մարմնի կողմից ընդունվելուց հետո 3-օրյա ժամկետում հրապարակվում է պետական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքէջում՝ բացառությամբ անձի եկամուտներին վերաբերող դրամաշնորհային պայմանագրերի:

7. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

7.1. Պետական մարմինը միջոցառումների իրականացման արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

7.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

7.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

7.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է միջոցառումների շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով միջոցառումներին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

7.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե

անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու սույն պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1. Սույն պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.2. Սույն պայմանագիրը կնքվում է սույն պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.3. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական 2-րդ շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032795
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղար՝
_____ Հ. Հակոբյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

«Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ
ք. Երևան, Մաշտոցի 46
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018001538
ՀՎՀՀ 01506092
Հեռ.՝ 060 623 514

Տնօրեն՝
_____ Ա. Չուլյան
(ստորագրություն)

Կ. Տ.

Հավելված N 1
« 03 » « 02 » 2025թ.
N ՄՇԴ - 15 - 2025 պայմանագրի

2025 թվականին «Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ-ի կանխատեսվող ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշները

N	Ցուցանիշներ	Միավոր	Քանակը
1	**Գրադարանային հավաքածուների պահպանում (պահպանվող գրադարանային հավաքածուների միավորի քանակը)**	միավոր	**7885387**
2	**Գրադարանային հավաքածուներից ակտիվ ընթերցողների թիվը, որից՝**	մարդ	**32525**
	իգական	մարդ	20670
	արական	մարդ	11855
3	**Գրադարանային հավաքածուների սպասարկում (սպասարկված միավորի քանակը), որից՝**	միավոր	**1435500**
	գիրք և պարբերական մամուլ	միավոր	*1 120 000*
	թվային շտեմարաններ	միավոր	*315500*
4	**Թվայնացված նյութերի քանակ (գիրք, մամուլ, այլ նյութեր), որից**	էջ	**525000**
	գիրք	էջ	400000
	պարբերական	էջ	125000
5	**Թվայնացված նյութերի քանակ (գիրք, մամուլ, այլ նյութեր)**	միավոր	**59500**
	գիրք	միավոր	58000
	պարբերական	միավոր	1500
6	**Գրադարանային հավաքածուների համալրում (գրականության համալրում), որից՝**	հատ	**2500**
	ձեռք բերվող գրքեր (միավոր)	հատ	*2370*
	ձեռք բերվող պարբերականներ (միավոր)	հատ	*130*
7	**«Շարժական գրադարան» /բիբլիոբուսի/ ծառայություններ (սպասարկվող մարզերի թիվը)**	գրադա րան	**5**
	տրամադրվող գրքերի քանակը	միավոր	**1500**
8	**Հնատիպ գրքերի (1512-1800 թթ.) վերականգնում, ամրակայում, ախտահանում՝ (հաստատված գիտական խորհրդի կողմից) Ցանկ N 1**	հատ	**6**
9	**Գրադարանային հավաքածուի՝ մշակութային նշանակություն ունեցող գրքերի վերականգնում, ամրակայում, ախտահանում՝ (1801-1920 թթ.) (հաստատված գիտական խորհրդի կողմից), Ցանկ N 2**	հատ	**85**

10	**Գրքերի, պարբերական մամուլի և այլ նյութերի վերականգնում, ամրակայում, ախտահանում**	էջ	**45200**
11	**Հրատարակությունների ինդեքսավորում՝այս թվում**		
	գրքի (ISBN), նոտագրական հրատարակությունների (ISMN) ստացող հրատարակությունների քանակ	անուն	**2600**
	պարբերականներ (ISSN)	անուն	**774**
12	**Գրատպության թանգարանի պահպանվող առարկաների թիվը**	միավոր	**410**
13	**Գրատպության թանգարանի այցելուների թիվը**	մարդ	***2300***
14	**Մատենագիտական գրանցումների քանակ**	հատ	**34070**
15	**Գրադարանավարների վերապատրաստման դասընթաց (մասնակցած մասնագետների քանակը)**	մարդ	**50**
16	Եկամուտներ հիմնական գործունեությունից	հազար դրամ	**16391.1**
17	Եկամուտներ այլ գործունեությունից	հազար դրամ	**10000.0**

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական 2-րդ շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032795
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղար՝

_____ Հ. Հակոբյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

«Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ
ք. Երևան, Մաշտոցի 46
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018001538,
ՀՎՀՀ 01506092
Հեռ.՝ 060 623 514

Տնօրեն՝

_____ Ա. Չուլյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ՀԱՎԵԼՎԱԾ N 2

« 03 » « 02 » 2025 թ. N ՄՇԴ- 15 - 2025
պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Կազմակերպության անվանումը՝ «Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ

Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման՝

Ծրագիր 1124	Միջոցառում 11004	**Գրադարանային ծառայություններ**												
Ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի, ծառայության անվանումը	Բյուջետային ծախսերի տնտ. դասակարգման հոդվածը	Նախատեսվում է ֆինանսավորել Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեից, այդ թվում ըստ ամիսների (աճողական)												ԸՆԴԱՄԵՆԸ
		I եռամսյակ			I կիսամյակ			9 ամիս			տարի			
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին	4637	0,0	66019,4	**132038,8**	187055,0	242071,1	**297087,3**	352103,5	407119,7	**462135,9**	528155,3	594174,7	**660194,1**	**660194,1**
Ընդամենը		0,0	66019,4	**132038,8**	187055,0	242071,1	**297087,3**	352103,5	407119,7	**462135,9**	528155,3	594174,7	**660194,1**	**660194,1**

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական 2-րդ շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032795
ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝
Հ. Հակոբյան
(ստորագրություն)

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝
«Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ
ք. Երևան, Մաշտոցի 46
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
հ/հ 900018001538,
ՀՎՀՀ 01506092
հեռ. 060 623 514
Տնօրեն՝
Ա. Չուլյան
(ստորագրություն)

Ցանկ N 1

«Մատենադարան» Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» հիմնադրամում վերականգնման նպատակով՝ «Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ-ի հավաքածուի կազմում ընդգրկված 6/վեց/ միավոր հայերեն հնատիպ գրադարանային առարկաների

N	Տեսակը	Հեղինակ, վերնագիր	Հրատ. տեղ., տպարան, տարեթիվ	Էջ	Շարվածք (սմ)	Հաշվառանիշեր	Կազմ	վիճակ	Ծանոթագրություն
1.	գիրք	ԽԱՉԱՏՈՒՐ ԷՐԶՐՈՒՄԵՑԻ ԱՌԱՔԵԼԵԱՆ, ՔԱՐՈԶԳԻՐՔ, հտ.1	Վենետիկ, Անտոնի Բորտոլիի, 1710թ.	6չհ., 1-560	19,2 x 13,2	8544-57, 1092 ԱՀ	կաշի	Թերի օրինակ, պակասում են 561-1195,1չհ. էջերը	
2.	գիրք	ՂԱԶԱՐ ՋԱՀԿԵՑԻ, ԴՐԱԽՏ ՅԱՆԿԱԼԻ	Կ. Պոլիս, Աստվածատուր Կոստանդնուպոլսեցու, 1735թ.	704	15,8 x 10,2	8831-57, 1057 ԱՀ	կաշի		
3.	գիրք	ԹԷՕՓԻԼՈՍ	Լիվոռնո, Ս. Էջմիածնի, Ս. Սարգսի, 1701թ.	240	12,7 x 7	7782-56, 79 ԱՀ	կաշի		
4.	գիրք	ԹՈՄԱ ԳԵՄԲԱՑԻ, ՅԱՂԱԳՍ ՀԱՄԱՀԵՏԵՒՄԱՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ	Վենետիկ, Անտոնի Բորտոլիի, 1737թ.	1-140, 143-440	11,4 x 6	28843-63, 157 ԱՀ	կաշի	Պակասում են 141-142 էջերը	
5.	գիրք	ՅԱԿՈԲ ՏԵԱՌՆԵՂԲԱՅՐ, ԵԳՐԵՄ ԽՈՒՐԻ ԱՍՈՐԻ, ԿՏԱԿԳԻՐՔ: ՅԱՂԱԳՍ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ	Կ.Պոլիս, Աստվածատուր Կոնստանդնուպոլսեցու, 1703թ.	3-192, 195-206	12,5 x 7,3	9027-57, 1275 ԱՀ	կաշի	Տիտղթ.-ն, 207-212 էջերը պատճեն, պակասում են 193-194 էջերը	
6.	գիրք	ՇԱՐԱԿՆՈՑ	Ամստերդամ, Սրբուհու Աստվածածնի, 1692թ.	23-48, 53-60, 65-76, 79-146, 177-190, 193-334, 481-644, 655-670, 705-720	12,3 x 7,5	8715-57, 1380 ԱՀ	Արհ. կաշի	Պակասում են 1-22, 49-52, 61-64, 77-78, 147-176, 191-192, 335-480, 645-654, 671-704 էջերը	Գրքում 670 էջից հետո կան այլ գրքից էջեր՝ 701-712

Ցանկ N 2

«Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ-ի հավաքածուներից վերականգնման ենթակա գրքերի

N	Տեսակը	Հեղինակ, վերնագիր	Հրատ. տեղ., տպարան, տարեթիվ	Էջ	Չափս (սմ)	Հաշվառման նիշեր	Կազմը	Ծանոթագրություն
1.	գիրք	Յոհաննէս Հաննա, Պատմութիւն Երուսաղէմի	Կ. Պոլիս, Հովհաննեսի և Պողոսի, 1782	355	20	38078-67, 1053 ԱՀ	կաշի	
2.	գիրք	Երեմիա Մեղրեցի, Բառգիրք Հայոց	Կ. Պոլիս, Մարտիրոս Սարգսյանի, 1728	576	15	8885-57, 296 ԱՀ	կաշի	
3.	գիրք	Երեմիա Մեղրեցի, Բառգիրք Հայոց	Կ. Պոլիս, Մարտիրոս Սարգսյանի, 1728	576	15	8886-57, 298 ԱՀ	կաշի	
4.	գիրք	Յակոբ Նալեան, Վէմ հաւատոյ	Կ. Պոլիս, Աստվածատուր Կոստանդնուպոլսեցու 1733	660	21	5709-38, 1028 ԱՀ	կաշի	
5.	գիրք	Մխիթար Սեբաստացի, Մեկնութիւն սրբոյ Աւետարանի որ ըստ Մատթէոսի	Վենետիկ, Անտոնի Բորտոլիի, 1737	1022	24	9015-57, 1165 ԱՀ	կաշի	
6.	գիրք	Ժամագիրք	Պետերբուրգ, Գրիգոր Խալդարյանցի, 1783	577	16	740-2003, 2182 ԱՀ	կաշի	
7.	գիրք	Իգնատիոս Աստուծազգեաց, ԹՈՒՂԹՔ	Կ. Պոլիս, Ստեփանոս Պետրոսյանի, 1783	159	17	824-2004, 2195 ԱՀ	կաշի	
8.	գիրք	Քսաւերիոս Դոռնեանց, Քարոզք Համառօտք	Վենետիկ, Դեմետրիոս Թեոդոսիուի, 1781	Ա-ԺԵ, 856	21	8436-57, 946 ԱՀ	կաշի	
9.	գիրք	Ներսէս Շնորհալի, Յիսուս որդի	Պետերբուրգ, Գրիգոր Խալդարյանցի, 1785	438	16	1305-50, 378 ԱՀ	կաշի	
10.	գիրք	Շարակնոց	Ամստերդամ, Սրբուհու Աստվածածնի, 1692	638	14.5	27394-62, 2054 ԱՀ	կաշի	
11.	գիրք	Յակոբ Տեառնեղբայր, Կտակգիրք	Կ. Պոլիս, Ա. հ., 1710	168	14	8120-57, 73 ԱՀ	թուղթ	
12.	գիրք	Ավետիքյան Գաբրիել, Նարեկ աղօթից	Վենետիկ, Ս. Ղազար, 1827	ԺԲ, 586, 1չ.հ.	21	9298-57, 312 ԱՀ	կաշի	
13.	գիրք	Գրիգոր Նարեկացի, Գիրք աղօթից: Մաս Բ	Կ. Պոլիս, Պողոս Արապեան, 1807	296	14	8141-57, 1667 ԱՀ	կաշի	

14.	գիրք	Հաւաքումն վկայութեանց սուրբ գրոց	Զմիւռնիա, Կոլիէլմոս Կրիֆֆիթի, 1849	4չh., 618	17	33346, 903 ԱՀ	թուղթ	
15.	գիրք	Փեշտիմալճյան Գրիգոր, Դիմառնութիւն ի չարչարանս Քրիստոսի փրկչին մերոյ	Կ. Պոլիս, Յովհաննու Միւհէնտիսեան, 1845	ԺԲ, 311	20	36808-66, 1603 ԱՀ	թուղթ	
16.	գիրք	Եունկ Էտուարտ, Եունկ ֆէյլէսոֆուն ֆիղանլէրի: Եախօտ Եունկուն կէճէլէրի, հտ. 1-3	Վէնէտիք, Սուրբ Ղազար մանասթրրընտա պասմա, 1858	530	18	36975-66, 278ԱՀ	թուղթ	
17.	գիրք	Վերն Ժիլ, Եիրմի պին ֆարսախ տէնիզլէր ալթընտա սէյահաթ=[20000 լյո ջրի տակ], հտ. 1,2	Սթանպօլ, Կ.Պիպէրեան մաթպաասը, 1892	351, 408	21	452-98, 979 ԱՀ	թուղթ	
18.	գիրք	Քիթապը մուգատտէս եանի ահտը աթիգ վէ ահտը ճետիտ	Վիէննա, Ամերիգան քիթապը մուգատտէս շիրքէթի, 1928	927,29 2,2	23	730-2004, 976 ԱՀ	կաշի	
19.	գիրք	Рикот Поль, Монархия Турецкая описанная чрез Рикота...	Санктпетербург, [Акад. наук], 1741	[2], 278: 1 л. ил.	30	693-2007, АФ 791	թուղթ	
20.	գիրք	Рикот Поль, Монархия Турецкая описанная чрез Рикота...	Санктпетербург, [Акад. наук], 1741	[2], 278: 1 л. ил.	30	694-2007, АФ 792	թուղթ	
21.	գիրք	Прохаска Георгий, Физиология или Наука...	Санктпетербург, Имп.Воспитательнаго Дома, 1822	[8], 634, [2]	20	775-2007, АФ 881	թուղթ	
22.	գիրք	Руссо Жан-Жак, Философическия уединенныя... Ч. 2	Москва, С.Селивановскаго 1822	263	15	778-2007, АФ 884	թուղթ	
23.	գիրք	Тассо Торквато, Освобожденный Иерусалим,...ч.1,2	Москва, Университет. Тип. 1820-1821	VI, 281: 2 вкл. л. портр. , ил., 283: 1 вкл. л. ил.	23	822-2007, АФ 929	թուղթ	
24.	գիրք	Собрание образцовых руских сочинений и...ч.6	Санктпетербург, Ивана Глазунова1824	CLXX, 331: 1 вкл. л. портр.	21	817-2007, АФ 923	թուղթ	

25.	գիրք	Санктпетербургский Журнал 10,11,12	Санктпетербург, Мед. Тип., 1807	118: 1 вкл. л. табл., слож., 144: 1 вкл. л. табл., слож., 136	21	723-2007, АФ 821	թուղթ	
26.	գիրք	Гильденштедт Антон Иоанн, Географическое и статистическое описание Грузии и Кавказа	Санктпетербург, Имп. Акад. Наук, 1809	VI,384	23	902-84, АФ 349	թուղթ	
27.	գիրք	Еллино-российско-французской лексикон...т.1,2	Москва , Н.С.Всеволожскаго, 1811	[12],382с., [4],266 с	27	419-2007, АФ 480	թուղթ	
28.	գիրք	Карамзин, Николай Михайлович, История государства Российскаго т.12	Санктпетербург, Н., Греча, 1829	VII, 330, 243, [1]	22	1537-89, АФ 429	թուղթ	
29.	գիրք	Olearius, Adam, The voyages and travels of the Ambassadors sent by Frederick Duke of Holstein	London, John Starkey, 1669	/18/, 316+232 p., 2 maps, 1 portr	32	3223-2007, 3233 AF	կաշի	
30.	գիրք	Mokerus Antonius, Libri tres de Pia et Liberali disciplina	Francoforti, S.n., 1577	30, 143, 18 p.	15	3643-2007, 3687 AF	թուղթ	
31.	գիրք	Iones Guilielmo, Poeseos Asiaticae Commentariorum	Lipsiae, Apud Haerdes Weidmanni et Reichium, 1777	LIV, 418 p., 3 pl.	20	3607-2007, 3651 AF	թուղթ	
32.	գիրք	Ferreres Claude de, Corps et compilation de tous les commentateurs anciens et modernes sur la coutume de Paris,vol.1	Paris, Chez Michel David,1714	1627 p.	41	3885-2007, 3971AF	կաշի	
33.	գիրք	Kircher Atahanase, Athanasii Kircheri Soc. Jesu Arca Noë, in tres libros digesta	Amstelodami, Apud Joannem Janssonium a Waesbergae, 1675	240, 16 p., ill.	35	3884-2007, 3970 AF	կաշի	
34.	գիրք	Վոլտեր, Մարի Ֆրանսուա, Œuvres complètes de Voltaire,Vol. 54-III	Paris, Chez Saugrain rue du Jardinet, 1785	535 p.	26	584-2007, 585AF	թուղթ	

35.	գիրք	Վոլտեր, Մարի Ֆրանսուա, Œuvres complètes de Voltaire,Vol. 11	Paris, Chez Saugrain rue du Jardinet, 1785	407 p., ill.	26	541-2007, 542AF	թուղթ	
36.	գիրք	WarrenL'Inde Anglaise en 1843, vol.3, Edouard de,	Bruxelles, Soc. Typ. Belge, 1844	354 p.	15	1272-2005, 416 AF	թուղթ	
37.	գիրք	Xenophontis, Xenophontis de Cyri disciplina ,vol.1-5	Lipsiae , Sumptibus Libr. Hahnianae, 1838	521 p.	21	559-2005, 324 AF	թուղթ	
38.	գիրք	Salvandy, N.-A. De, Histoire de Pologne avant et sous le Roi Jean Sobieski, T.2	Paris, Sautelet, 1829	284 p	16	616-2005, 330 AF	թուղթ	
39.	գիրք	De Feller, F.-X., Dictionnaire historique ou biographie universelle, T.4	Paris, BCD, 1837	703 p.	25	623-2005, 338 AF	թուղթ	
40.	գիրք	Capefigue, M, L'Europe depuis l'avénement du Roi Louis-Phillippe,T.9	Paris, Au Comptoir des imprimeurs-unis, 1846	463 p.	20	464-2005, 305 AF	թուղթ	
41.	գիրք	Երզնկեանց, Ռոստոմ Համառօտութիւն պատմութեան հայոց	Տփխիս, 1843	200	21	Լեռ / 554	թուղթ	
42.	գիրք	Ճէրրահեան, Գ. Ընդարձակ առողջաբանութիւն ... Հտ.Ա	Արմաշ, 1878	607	21	Լեռ / 1232	թուղթ	
43.	գիրք	Ներսես Լամբրոնացի Սրբոյն Ներսէսի Լամբրոնացւոյ...	Վենետիկ, 1847	11չh., 557	23	Սերեբ / 489	կաշի	
44.	գիրք	Eichendorff, Joseph von Freiherr von Eichendorffs Werke 2. Bd.	Leipzig ; Wien, [1891?]	506	19	S.S. / 1600	արհ. կաշի	
45.	գիրք	Ginguené, Pierre-Louis Histoire littéraire d'Italie Tom 2	Paris, 1824	591	21	S. S. / 1148	ստվարաթուղթ	
46.	գիրք	Камаровский, Л.А. Положение Армян в Турции	Москва, 1896	443	23	Сереб / 1482	ստվարաթուղթ	
47.	գիրք	Champsaur, Félicien La gomme	Paris, [S. a.]	218	21	Arg / 618	արհ. կաշի	
48.	գիրք	Pichot, Amédée Galerie des personnages...	Paris, 1844	126	26	Arg / 2726	արհ. կաշի	

49.	գիրք	Кривенко, Сергей Николаевич Физический труд...	Санкт-Петербург, 1887	300	22	Кор / 1246	Արհ. կաշի	
50.	գիրք	Армяно-григорианский календарь И. Абраамянц	Кишинев, 1907	166	16	АР / 274	ստվարաթուղթ	
51.	գիրք	А. Грен Армения	Киев,1899	47	25	АР / 3875	ստվարաթուղթ	
52.	գիրք	Галахов, Алексей Дмитриевич Полная русская хрестоматия	Санктпетербург, 1861	444	25	Ер. гим / 3271	ստվարաթուղթ	
53.	գիրք	Сенкевич, Генрик Меченосцы	Москва, 1907	52	23	Ер.гим / 2672	ստվարաթուղթ	
54.	գիրք	Буринский, Владимир Федорович Дагерр и Ниэпс	Санкт-Петербург, 1893	80	17	Ер.гим / 5275	ստվարաթուղթ	
55.	գիրք	Ovidius Naso Die Metamorphosen... 1. Bd., 2. Bd.	Berlin, 1885,1881	273, 295	19	G. d'Er. / 505	ստվարաթուղթ	
56.	գիրք	Чернышевский, Николай Гаврилович Полное собрание сочинений Н. Г. Чернышевского	Санкт-Петербург, 1906	476	25	Ер. гим / 4958	ստվարաթուղթ	
57.	գիրք	П.Г. Виноградова Книга для чтения по истории средних веков Вып. 4	Москва, 1903	496	24	Ер. гим / 4705	արհ. կաշի	
58.	գիրք	Опыт областного великорусского словаря	Санкт-Петербург, 1852	275	31	Лаз / 3671	ստվարաթուղթ	
59.	գիրք	Belletête, B. Contes turcs en langue Turque	Paris, 1812	258	25	Лаз / 861	ստվարաթուղթ	
60.	գիրք	Сборник сведений о кавказских горцах Вып. 9	Тифлис, 1868	463	24	К / 4603	արհ. կաշի	
61.	գիրք	Сборник материалов...	Тифлис, 1893	[533]	22	К / 4229	ստվարաթուղթ	
62.	գիրք	Обозрение российских владений...	Санкт-Петербург, 1836	401	21	К / 5678	ստվարաթուղթ	

63.	գիրք	Кавказский сборник... Вып.14	Тифлис, 1890	553	25	К/ 1829	ստվարաթուղթ	
64.	գիրք	Отчет попечителя...за 1888 год	Тифлис, 1889	223, 10, X, 201, 343, 64, 139	21	К/ 2114	ստվարաթուղթ	
65.	գիրք	Потто, Василий Александрович Кавказская война ... Т. 4, Вып. 1-4	Тифлис, 1887	534	22	К / 3823	ստվարաթուղթ	
66.	գիրք	Էմինեան, Սրապիոն, Երեքլեզուեան բառագիրք : Այսինքն գաղղիերէն - հայերէն- տաճկերէն Բ տպագրութիւն	Վիէննա, 1871	1222, 2 չհ. էջ	18x11.5	4704-49	Կազմը՝ կոշտ, կռնակը՝ կաշվե	
67.	--//--	Լէօ, Հայկական տպագրութիւն, հատոր 1 XVI – XVII դար	Թիֆլիս : Տպ. Վրաց հրատ. ընկ., 1901	451	12x17.5	1816-41	Կոշտ կազմով	
68.	--//--	Լէօ, Հայկական տպագրութիւն, հատոր 1. XVI – XVII դար Երկրորդ տպագրություն Փոփոխված, լրացրած	Թիֆլիս : Տպ. «Հերմէս», 1904	546, 1 չհ. էջ	12.5x19	4773-49	Կազմը՝ կոշտ, կռնակը՝ կաշվե	
69.	--//--	Յակոբեան, Յ., Հիւանդին բարեկամը : Առաջնորդ հիւանդաց դարմանման	Կ. Պոլիս : Տպ. Գ. Պաղտատլեան (Արամեան), 1885	416	12.5x17.5	35756	Կազմը՝ կոշտ, կռնակը՝ կաշվե	
70.	--//--	Ղեւոնդ Պատմագիր, Արշաւանք արաբաց ի հայս	Փարիզ, 1857	238, 2 չհ. էջ	12x19	9-2016	Կոշտ կազմով	
71.	--//--	Ղեւոնդ Պատմագիր, Արշաւանք արաբաց ի հայս	Փարիզ, 1857	204	12x18	3511-74	Կոշտ կազմով	
72.	--//--	Համաբարբառ հին եւ նոր կտակարանաց	Յերուսաղէմ : Տպ. Առաքելական աթոռոց սրբոյ Յակովբյանց, 1895	Ա – ԺԲ, 1573, 3 չհ. էջ	31x21.5	21917	Կոշտ կազմով	

73.	--//--	Մինասեան Մ. Գ., Բառարան անգղիերէն, հայերէն եւ հայատառ թուրքերէն երկրորդ տպագրութիւն	Կ. Պոլիս : Տպ. Վ. Եւ Հ. Տէր-Ներսէսեան, 1908	996	12x18.5	86-47	Կոշտ կազմով	
74.	--//--	Պալճեան, Աղեքսանդր, Աթոռ Սրբոյն Պետրոսի Առաքելապետի	Վիէննա, 1853	287	22x14	20358	Կոշտ կազմով	
75.	--//--	Ստչիգովսկի, Յովսէփ, Էջմիածնի Աւետարանը : Ուսումնասիրութիւն հայկական, ռավեննական եւ ասորա-եգիպտական գեղարուեստի	Վիեննա : Տպ. Մխիթարեան, 1892	88, Տախտակ Ա - Զ	28.5x20.5	743-39	Կոշտ կազմով	
76.	--//--	Александров А., Полный англо – русский словарь Часть 1 A - J Часть 2 K -Z	Санктпетербург, Часть 1 - 1879 Часть 2 - 1878	I - IX Часть 1 608 Часть 2 717, 1-15, 2 չհ. էջ	14x21.5	3277	Կոշտ կազմով	
77.	--//--	Герье В., Западное монашество и ПАПСТВО. Часть II	Москва, 1913	334	18x27	73782	Փափուկ կազմով	
78.	--//--	Творения Лактанция, писателя в начале четвертого века, прозванного христианским Цицероном Часть 1, Часть 2	Санктпетербург, 1848	Часть 1 404 Часть 2 317 3 չհ. էջ	15x22.5	1221-2008	Կազմը՝ կոշտ, կռնակը՝ կաշվե	
79.	--//--	Параллельные словари языков русского, французскаго, немецкого и английского	Санктпетербург, 1908	I - LXXXVIII, 832	14x18.5	241-2008	Կազմը՝ կոշտ, կռնակը՝ կաշվե	
80.	--//--	Molière, Oeuvres de Moliere	Paris, 1804	T. 1	20x13	I-13342	Կաշվե կազմով	

81.	--//--	Molière, Oeuvres de Moliere	Paris, 1804	T. 2	20x13	I-13343	Կաշվե կազմով	
82.	--//--	Molière, Oeuvres de Moliere	Paris, 1804	T. 3	20x13	I-13344	Կաշվե կազմով	
83.	--//--	Molière, Oeuvres de Moliere	Paris, 1804	T. 4	20x13	I-13345	Կաշվե կազմով	
84.	--//--	Molière, Oeuvres de Moliere	Paris, 1804	T. 5	20x13	I-13346	Կաշվե կազմով	
85.	--//--	Molière, Oeuvres de Moliere	Paris, 1804	T. 6	20x13	I-13347	Կաշվե կազմով	

Հավելված N 3
« 03 » « 02 » 2025թ.
N ՄՇԴ - 15 - 2025 պայմանագրի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ծրագրի կամ քաղաքականության միջոցառման անվանումը	Հափորոշիչը (նկարագրությունը)	Հափորոշչի տեսակը	Ոչ ֆինանսական ցուցանիշներ					
			Ցուցանիշի հաստատված կանխատեսումը հաշվետու ժամանակահատվածի համար	Ցուցանիշի փոփոխություններն ըստ համապատասխան իրավական ակտի (+/-)	Ճշտված ցուցանիշը հաշվետու ժամանակահատվածի համար (սյուն 1+սյուն 2)	Փաստացի ցուցանիշը (կատարված և ընդունված) հաշվետու ժամանակահատվածում	Հաստատված և փաստացի ցուցանիշների տարբերությունը (սյուն 4-սյ. 3)	Տարբերության պատճառը (սյուն 2-ում նշված իրավական ակտերի հղումները և սյուն 5-ում նշված տարբերության պարզաբանումները)
Ա	Բ	Գ	1	2	3	4	5	6

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական 2-րդ շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032795
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղար՝
---------- Հ. Հակոբյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

«Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ
ք. Երևան, Մաշտոցի 46
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018001538
ՀՎՀՀ 01506092
Հեռ.՝ 060 623 514

Տնօրեն՝
---------- Ա. Չուլյան
(ստորագրություն)

Կ. Տ.

Հավելված N 4
« 03 » « 02 » 2025թ.
N ՄՇԴ - 15 - 2025 պայմանագրի

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարություն
ՀՎՀՀ 02698732

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Հասցե՝

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆՁՄԱՆ – ԸՆԴՈՒՆՄԱՆ

ք. Երևան

Պայմանագրի համարն ու կնքման ամսաթիվը N « ---- » « ---- » 2025 թ.

Պետական մարմինը՝ ի դեմս ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գլխավոր քարտուղար Հ. Հակոբյանի, և Կազմակերպությունը, ի դեմս _____ -ի տնօրեն _____ի, հիմք
(կազմակերպության անվանումը) (անուն ազգանուն)

ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ բովանդակային վարչության « » « » 2025 թ.-ի դրական եզրակացությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Կազմակերպությունը պայմանագրի շրջանակներում իրականացրել է _____ միջոցառումը, իսկ պետական մարմինն վճարել է դրա դիմաց՝ պայամանագրով սահմանված կարգով և չափով:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 3,
Կառավարական 2-րդ շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032795
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղար՝

---------- Հ. Հակոբյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Գլխավոր քարտուղարի տեղակալ՝

---------- Վ. Գասպարյան
(ստորագրություն)

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

«Հայաստանի ազգային գրադարան»
ՊՈԱԿ
ք. Երևան, Մաշտոցի 46
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018001538
ՀՎՀՀ 01506092
Հեռ.՝ 060 623 514

Տնօրեն՝

---------- Ա. Չուլյան
(ստորագրություն)

Կ.Տ.